ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետություն,Լոռումարզ,Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» օգոստոսի 2025թ. № 739

ԼԵՎՈՆ ՄԻՇԱՅԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 30-ի թիվ 65-Ա որոշումը, 2025 թվականի օգոստոսի 8-ի «Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցի աճուրդով վաճառքի արդյունքների մասին» թիվ 1/1-1 արձանագրությունը, սահմանափակումների վերաբերյալ ՀՀ ՆԳՆ հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության Լոռու մարզի հաշվառման- քննական բաժնի 02.07.2025 թվականի թիվ 13675291 տեղեկանքը՝ ***որոշում եմ.***

1. XTA21104050824544 նույնացման համարով, 508 CG 61 հաշվառման համարանիշով, ՎԱԶ (VAZ) 21104 մակնիշի, 2005 թվականի թողարկման թեթև մարդատար տրանսպորտային միջոցը 472 500 (չորս հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Լևոն Միշայի Դանիելյանին (ծնված՝ 01.09.1969թ.):

2. Լևոն Միշայի Դանիելյանի հետ կնքել տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2025թ.օգոստոսի 11
ք.Սպիտակ